

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ, ՉԱՓԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

տնտեսական և առևտրական հարաբերություններում տեխնիկական խոչընդոտների վերացման, արտադրանքի համատեղելիության, փոխադարձ փոխարինելիության, մարդու կյանքի և առողջության համար դրա անվտանգության ապահովման, շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով,

ցանկանալով զարգացնել համագործակցությունը ստանդարտացման, չափաբանության և հավաստագրման բնագավառում, ընդսմին, ելնելով այդ ասպարեզում միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված սկզբունքներից և նորմերից, առաջնորդվելով երկու երկրների տնտեսական շահերով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կզարգացնեն և կամրապնդեն համագործակցությունը ստանդարտացման, չափաբանության և հավաստագրման բնագավառներում, մասնավորապես՝

կկիրառեն գործող ստանդարտները «ԳՈՍՏ» հապավումով,

համաձայնեցված պայմաններով փոխադարձաբար կտրամադրեն նորմատիվ-տեխնիկական փաստաթղթեր (ստանդարտների տեղեկատուներ, ստանդարտներ և ստանդարտացման, հավաստագրման ու որակի այլ փաստաթղթեր),

փոխհամաձայնեցված պայմաններով կճանաչեն չափաբանական ատեստավորման, պետական ստուգման և չափիչ միջոցների տրամաչափման արդյունքները, ֆիզիկական մեծությունների միավորների՝ գոյություն ունեցող պետական չափանիշները,

կմշակեն և կկիրառեն նյութերի և նյութեղենի ստանդարտ նմուշներ, նյութերի և նյութեղենի ֆիզիկական շփումների և առանձնահատկությունների մասին ստանդարտ տվյալներ,

կճանաչեն հավաստագրման մարմինները, փորձարարական լաբորատորիաները (կենտրոնները), փորձարկումների արդյունքները, հավաստագրերը, ինչպես նաև մատակարարվող արտադրանքի համապատասխանելիության նշանները՝ Կողմերի միջև լրացուցիչ համաձայնեցված պայմաններով,

կկատարեն արտադրանքի ստանդարտների, դասակարգիչների, փաստաթղթերի և քարտացուցակագրման միասնականացված համակարգերի ներդաշնակեցման համատեղ աշխատանք:

Յոդված 2

Կողմերը կփոխգործակցեն կադրերի պատրաստման, մասնագետների փոխանակման, ձեռնարկությունների, ձեռնարկատերերի, հասարակական կազմակերպությունների միջև անմիջական կապերի հաստատման, ինչպես նաև ստանդարտացման, չափաբանության և հավաստագրման բնագավառում նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի, ուսումնական ձեռնարկների, մեթոդական փաստաթղթերի պատրաստման աշխատանքների կազմակերպման գործը և բարենպաստ պայմաններ կստեղծեն այդ փոխգործակցության համար:

Յոդված 3

Սույն Համաձայնագրի իրագործման համար պատասխանատու լիազոր մարմիններն են՝

Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի ստանդարտացման և չափաբանության պետական կենտրոնը,

Ռուսաստանի Դաշնությունում՝ Ռուսաստանի Դաշնության ստանդարտացման, չափաբանության և հավաստագրման կոմիտեն:

Լիազոր մարմինները կարող են միմյանց հետ պայմանավորվել սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցության իրականացման միջոցների մասին:

Յոդված 4

Սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում նախատեսված ուղղություններով համագործակցությունը իրականացվելու է համատեղ ծրագրերի հիման վրա:

Համագործակցության ֆինանսավորումն իրականացվելու է Կողմերի պայմանավորվածության հիման վրա:

Յոդված 5

Կողմերը, անհրաժեշտության դեպքում, առանձին համաձայնագրերի կնքման միջոցով կստեղծեն սույն Համաձայնագրի դրույթների իրագործման համատեղ համակարգող մարմիններ:

Յոթերորդ 6

Կողմերը կփոխգործակցեն ստանդարտացման, չափաբանության և հավաստագրման գծով տարբեր միջազգային կազմակերպություններում՝ փոխաջակցելով այն միջազգային կազմակերպություններին մասնակցելու կամ անդամագրվելու գործում, որոնց անդամն է Կողմերից մեկը:

Յոթերորդ 7

Կողմերը կապահովեն ստացվող փաստաթղթերի և սույն Համաձայնագրի շրջանակներում անցկացվող աշխատանքների մասին տեղեկությունների և ձեռք բերված գիտատեխնիկական արդյունքների գաղտնիությունը, եթե Կողմերից մեկը կվերապահի, որ դրանք գաղտնի բնույթ են կրում:

Յոթերորդ 8

Կողմերից մեկը համագործակցության ընթացքում ստացված գիտատեխնիկական տեղեկությունը կարող է երրորդ կողմին հանձնել միայն այդ տեղեկատվությունը տրամադրած Կողմի համաձայնության պայմանով:

Յոթերորդ 9

Սույն Համաձայնագրի դրույթները անհրաժեշտության դեպքում կկոնկրետացվեն լրացուցիչ համաձայնագրերով և/կամ արձանագրություններով, որոնք կկնքվեն Հայաստանի ստանդարտացման և չափաբանության պետական կենտրոնի ու Ռուսաստանի Դաշնության ստանդարտացման, չափաբանության և հավաստագրման կոմիտեի միջև:

Յոթերորդ 10

Սույն Համաձայնագիրը չի շոշափում ստանդարտացման, չափաբանության և հավաստագրման բնագավառում Կողմերի՝ նախկինում կնքած պայմանագրերից բխող պարտավորությունները:

Սույն Համաձայնագրի իրագործման և մեկնաբանման հետ կապված բոլոր վեճերը կլուծվեն բանակցությունների միջոցով:

Յոթերորդ 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ստորագրման օրից և կգործի հինգ տարվա ընթացքում և ինքնաբերաբար կերկարաձգվի հետագա տարեկան ժամանակաշրջանների համար, եթե Կողմերից մեկը համապատասխան ժամանակաշրջանն ավարտվելուց առնվազն վեց ամիս առաջ գրավոր չտեղեկացնի մյուս Կողմին Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1993 թվականի հունիսի 25-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի հունիսի 25-ից: